ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Երեկ բազմահազար ստեփանակերտցիներ հավաքվել էին Խաղաղի Հաղթանակի հրապարակում: Նրանք այստեղ էին եկել Հայկական ԽՍՀ պետական և ազգային եռագույն դրոշներով, լոզունգներով, տրանսպարանտներով. «Արցախի փրկությունը մայր Հայաստանի հետ միացումն է», «Առանց հետաձգման անհապաղ լուծել Արցախի պրոբլեմը», «Հանձնաժողովին՝ միայն օբյեկտիվություն», «Ապահովել ազգերի ինքնորոշումը»: Արտոնված միտինգը նվիրված էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի աշխատանքների ընթացքին:

Միտինգում ելույթ ունեցողները պահանջեցին Արցախի պրոբլեմը անհապաղ ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ներկա նստաշրջանի քննարկմանը: Մանրամասն ինֆորմացիա տրվեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի հանձնարարությամբ Լեռնային Ղարաբաղում գտնվող հանձնաժողովի աշխատանքների մասին: Նշվեց, որ հանձնաժողովի տասն անդամները և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի խորհրդատուները բաժանվել են խմբերի և ջանում են առավելագույն արդյունավետությամբ օգտագործել մարզում լինելու ամեն մի ժամը:

Հուլիսի 20—26-ը ներառյալ հանձնաժողովի անդամները հանդիպումներ են ունեցել մարզի բաղմաբնների և շրջանների աշխատավորական կոլեկտիվների հետ, զրույցներ ունեցել երկրամասի կենսագործունեության զանազան պրոբլեմների շուրջը:

Միտինգում ելույթ ունեցան ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի պատասխանատու աշխատող Վալերի Ղազարյանը, Լեռնային Ղարաբաղի պոլիգրաֆմիավորման գլխավոր դիրեկտոր Յուրի Ներսիսյանը, բուժաշխատող Տամարա Շվեդովը, «Միացում» համազգային կազմակերպության խորհրդի անդամներ Գրիգոր Աբանեսյանը և Լևոն Միրզոյանը, ժողովրդական դեպուտատ Սամվել Գալստյանը, գրողներ Գուրգեն Գաբրիելյանը և Հրաչյա Բեգլարյանը, Վրացական ԽՍՀ-ի և Շահումյանի շրջանի գյուղական աշխատավորական ներկայացուցիչները և ուրիշներ, որոնք իրենց ելույթներում միաբերան պահանջեցին ոչ մի կերպ չընհետաձգել Արցախի հարցի լուծումը:

Միտինգի մասնակիցների անունից դիմում հղվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ առանց հետաձգելու քննարկել և դրական լուծում տալ Արցախի հայության արդարացի պահանջին:

Հանձնաժողովը կշարունակի իր աշխատանքները մարզի շրջաններում մինչև հուլիսի 30-ը: Ղարաբաղցիները մեծ սպասելիքներ ունեն այդ հանձնաժողովի աշխատանքների արդյունքներից:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

(Մեր սեփ. թղթ.)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ